դեսպանը, ձախ կողմը պատրաստուած էր մեր դեսպանների և իրանց մարդկանց համար, իսկ Խանի եղբը դիզուել էին նորա ազնուականները և տանու մարդիքը։ Մեզ սիրով ընդունելուց յետոյ, Խանը հրաման տուաւ Հայերին կատարել ջրօրհնէնքը, որ սովորաբար ըսկսվում է, որ ժամին որ Խանը կը հրամայէ։ Երբ գետի եղերքում Հայք սկսեցին կարդալ աղօթքները, չորս հատ Հայք բոլորովին մերկանալով, թափո եցին ջուրը, գետի մի մասը սառուցից մաքրելու համար, որովհետև այս ժամանակը գետը սառուցով ծածկուած էր։ Գետը մտնող այդ Հայք քանի մի ժամանակ ջուրի մէջ լող տուին։

«Մօտ մի ժամ եպիսկոպոսի կարդալուց, միաբանութեան երգելուց և ծնծղայի վերայ ածելուց յետոյ, որ միմեանց վերայ զարնում էին, եպիսկոպոսը ջրի մէջ փոքր ինչ Միւռոն ածաւ, ապա թաթախեց ջուրի մէջ մի փոքրիկ արծաթեայ և թանդաղին քարերով զարդարուած Խաչ, և վերջապէս տարածելով գետի վերայ իւր գաւազանը, օրհնեց ջուրը։ Անմիջապէս ժողովուրդը սկսեց գետից ջուր առնել և լուանալ երեսը։ Քանի մի երիտասարդներ թռան ջուրը, իսկ մեծամասնութիւնը բաւականանում էր նորանով, որ լուացվում էր օրհնած ջրով։

Հանդէսի վերջանալուց յետոյ մեր շուրջ կողմը սկսեցին սաստիկ խմել և երբոր Խանը շատ գինովացաւ, նա լուռ ու մունջ վեր կացաւ ձի հեծաւ և գնաց։

Նորան հետևեցին և միւս պարսիկները։ Այդ տեսակ մնաս-բարևին սովոր չլինելով, մենք չգիտէինք ինչպէս հասկանալ այդ բոլորը, վասնորոյ մենք էլ ձի հեծանք և գնում էինք, երբ տեսանք որ Խանը ճանապարհին կանգնել՝ սպասում է դեսպաններին։ Յետոյ մեր փորձից ու ժողոված տեղեկութիւններից իմացանք, որ Պարսից ընդհանուր սովորութիւն է եղել, որ երբ Շահի կամ Խանի խնջոյքներում են լինում, հիւրերը ուղած ժամանակ լուռ ու մունջ առանց մնաս բարևի, վեր են կենում ու դուրս գնում։ Նոյնը անում է տանուտէրը, ինչպէս քանի մի անգամ տեսանք պարսից թագաւորի խնճոյքներում։

Յունվարի 8-ին Հայոց եպիսկոպոսը, շատ փառաւոր ընթացքով, եկաւ դեսպաններին այցելութեան, նորա առաջ գալիս էին բաղմաթիւ քահանայք եկեղեցական զգեստով և ձեռքներին վառած